ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> 04 2013թ. N: 94-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի>> 6-րդ և 7-րդ կետերի դրույթները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու ծննդատուն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2013 թվականի ապրիլի 23-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Սեյրան Պետրոսյան	- ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ (նախագահ)
Տիգրան Ղարիբյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (քարտուղար)
Հարություն Արշակյան	- ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ
Խաչատուր Պողոսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Նորիկ Գրիգորյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Լիպարիտ Մարտիրոսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Հովհաննես Հովհաննիսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է